

Թեւեալոյ պէս ներկայացուցիչներով: Մի եւ նոյն երեւոյթն էր որ կը կրկնուէր եւ յառաջ կը բերէր այս տեղ՝ Պոլսոյ մէջ՝ Կոլոտի Դպրոցին վրայ նշանակելի հակազդեցութիւն մը:

Տաթեւացի՝ առանց «նիւ» մ'ըլլալու, սերտած էր ատոնց «սուր» գրութիւնը եւ սպառազինուած մի եւ նոյն ղէնքերով՝ կը կռուէր, կը հակաճառէր, կը ջատագովէր ու կը մեկնէր: — Տաթեւացին ազդուած էր եւ կը հակազդէր:

Կոլոտի Դպրոցը քայլ մ'աւելի առած էր: Հոս, ժամանակի ոգւոյն համաձայն, աւելի քննութիւն եւ ներողամտութիւն կը տիրէր: Ամբողջ իբր ընձիւղը Սիւնեաց դպրոցին, Պոլսոյ մէջ եկած հասած էր ճակատագրական հետեւանքի մը: Տաթեւացին այնչափ ներողամիտ չէ որչափ են Կոլոտ ու Նալեան:

Կոլոտի Դպրոցին մէջ թարգմանութեան համար ընտրուած գրքերուն այն մասերը, որոնք ուղղակի համաձայն էին Հայ Եկեղեցւոյ ըմբռնումներուն, կ'ընդգրկուէին իբր իրեն սեփական ըմբռնումներ. այն մասերն ալ, որոնք լայն դատողութեամբ կամ բարեացակամ մեկնութեամբ կրնային հայացուիլ, ասոնք ալ ուղիղ ըմբռնումներ էին: Բուն խնդիրը կը մնար յայտնի տարբերութիւններուն եւ ըմբռնումներուն վրայ, որոնք խնդիր եղած են արդէն ամէն ժամանակի համար:

Եթէ Սիւնեաց կամ, մասնաւոր առումով, Տաթեւացւոյն Դպրոցը միեւնոյն պատճառներու տակ հակազդեցութիւն մը երեւան բերաւ միեւնոյն դրութեամբ, Կոլոտի Դպրոցը թէեւ միեւնոյն՝ բայց աւելի զօրաւոր պատճառներու տակ կը գտնուէր:

Տաթեւացւոյ դարուն՝ Եւրոպա իր դեպքաններով չէր միջամտեր եկեղեցիներու դաւանաբանական եւ նուիրապետական խնդիրներուն: Կոլոտի դարուն՝ դեպքաններն են որ կը միջամտեն